metro.net/nsfvbrt

Հաջորդ կանգառը՝ բարելավված փոխադրումներ North Valley-ում:

NORTH SAN FERNANDO VALLEY-Ի ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱՆՑՔ

Տեղեկատվական թերթիկ

Metro

ԳԱՐՈՒՆ 2023

Ակնարկ

Metro-ն ծրագիր ունի հեշտացնելու LA-ում տեղաշարժվելն՝ ավելի լավ փոխադրումների շնորհիվ North Valley-ում: North San Fernando Valley-ի Փոխադրումների միջանցքի նախագիծը (North SFV) կբարելավի արևելքից-արևմուտք երթևեկության ծառայությունն՝ ապահովելով ավելի լավ հասանելիություն դեպի աշխատավայրեր, կրթական հաստատություններ և կարևոր ծառայություններ:

Նախագիծն առաջին հայացքից

North San Fernando Valley-ի Փոխադրումների միջանցքի նախագիծն առաջարկում է ընդլայնված ավտոբուսային ցանց, որը կավելացնի կապակցումը և կտրամադրի բարձրորակ ավտոբուսային ծառայություն և փոխադրումների ենթակառույց North San Fernando Valley համայնքներում՝ արևմուտքում Northridge-ից մինչև արևելքում North Hollywood: Բարելավմանը ենթակա հիմնական միջանցքները ներառում են Roscoe Bl, Nordhoff St և Lankershim Bl, ինչպես նաև լրացուցիչ բարելավումներ Reseda Bl, Sherman Way, Vanowen St և Victory Bl-ի համար: Այս նոր մոտեցումը, որը կոչվում է BRT Ցանցի բարելավումներ, հիմնված է լայնածավալ տեղեկատվության և Metro-ի Խորհրդի ցուցումների վրա՝ ելնելով նախկինում կատարված ուսումնասիրություններից և 2019թ.-ին ավարտած միագիծ Ավտոբուսային արագ փոխադրման (Bus Rapid Transit, BRT) Այլընտրանքների անալիզից:

BRT Ցանցի բարելավումները կտրամադրեն հետևյալ նպաստները՝

> Ավելի արագ, ավելի հաճախակի և ավելի վստահելի ավտոբուսային ծառայություն
> Ավելի շատ կապակցում շրջանային փոխադրումների ցանցի հետ
> Ավելի լավ հասանելիություն դեպի տարածաշրջանի կարևորագույն նպատակակետեր
> Ավելի շատ փոխադրումներ՝ աճող պահանջարկը բավարարելու համար
> Համալրված հարմարություններով ավտոբուսային կանգառներ
> Կարճ ժամկետում ծառայությունների բարելավումներ ուղևորների համար

Այս նոր ծառայությունը կավելացնի ուղևորների քանակը և կբարելավի փոխադրման North Valley-ում: Ավելի լավ միացումները գործունեության կարևոր կենտրոնների հետ և ավելի լավ հասանելիությունը դեպի աշխատավայրեր, կրթական հաստատություններ և կարևոր ծառայություններ կխթանեն փոխադրումների համակարգը վարչաշրջանով մեկ՝ միացնելով ավելի շատ մարդկանց փոխադրումների ցանցին: Կուսումնասիրվի նաև բարելավված կապակցումը գոյություն ունեցող կամ ծրագրավորված փոխադրման այլ գծերի հետ, ինչպես օրինակ՝ Metro B գիծը (Կարմիր), Metro G գիծը (Նարնջագույն), ապագա East San Fernando Valley թեթև գնացքային փոխադրումը, Metrolink և ապագա North Hollywood-ից Pasadena Փոխադրումների միջանցքի նախագիծը:

Նախագծի ֆինանսավորումը

2016թ. նոյեմբերին LA վարչաշրջանի բնակիչները հաստատեցին Measure M՝ կես ցենտ հարկը, որը կֆինանսավորի փոխադրումների մի քանի բարելավումներ: Այս միջոցի շրջանակներում ծրագիրը $180 միլիոն ֆինանսավորում է ստացել:

BRT Ցանցի բարելավումները

Կկիրառվեն բառելավումներ արագության, հուսալիության և հաճախորդների սպասարկման համար, ներառյալ՝ մի քանի ֆինանսական և գործառնական բարելավումներ, ինչպիսիք են՝

> Ծառայության և հարմարությունների բարելավումներ՝
- Ծառայության բարելավված հաճախականություն՝ շաբաթվա օրերի ցերեկվա ժամերին՝ յուրաքանչյուր 10 րոպեն մեկ Roscoe գիծ 152-ի և Nordhoff գիծ 166-ի համար
- Նոր ավտոբուսային կանգառներ մոտ 400 վայրերում
- Համալրված հարմարություններով ավտոբուսային կանգառներ, ներառյալ՝ մեծ ապաստաններ, լրացուցիչ նստատեղեր, իրական ժամանակով տեղեկատվություն և ճանապարհը գտնելու տեղեկություն, ինչպես նաև ավելի լավ լուսավորում հինգ հիմնական վայրերում
- Առանց արտանետումների 75 նոր էլեկտրական ավտոբուսներ գծեր 152, 162, 166 և 240-ում

> Ավտոբուսների արագության և հուսալիության բարելավումներ՝
- Միայն պիկ ժամերին (7–10am, 3–7pm) նոր ավտոբուսային գծեր Roscoe Bl-ի 10.5 մղոնի վրա
- Փոխադրումների ազդանշանի առաջնահերթություն մինչև յոթ ավտոբուսային գծերի համար (152, 162, 164, 165, 166, 224 և 240)
- Ավտոբուսային կանգառների նոր դիզայն (ավտոբուսային ելուստներ) ավելի քան 80 կանգառներում՝ հեշտացնելու համար ավտոբուսների՝ երթևեկությունից ներս ու դուրս անելը
- Բոլոր դռներից նստեցման հնարավորություն San Fernando Valley-ի բոլոր ավտոբուսային գծերի համար

NORTH SAN FERNANDO VALLEY ՆԱԽԱԳԾԻ ՏԱՐԱԾՔ

Նախագծի նախապայմանները

> Քվեարկողների կողմից հաստատված Measure M (2016) ներառում է $180 միլիոն արևելքից արևմուտք բարձր տարողունակությամբ փոխադրումների ծառայության համար North San Fernando Valley-ում, մասնավորապես ծառայություն դեպի CSUN, ինչը կթեթևացնի երթևեկությունը և կբավարարի փոխադրման աճող պահաջարկը San Fernando Valley-ում:

> Այս ծրագիրը կաջակցի ողջ վարչաշրջանի փոխադրման համակարգի հաջողությանը՝ կապակցելով շատ մարդկանց և երթևեկություն ստեղծելով, ներառյալ՝ CSUN և այլոք:

> 2019թ.-ին Metro-ն կատարել է Այլընտրանքների անալիզ (AA), որը որոշել է, որ Nordhoff St և Roscoe Bl ամենածանրաբեռնված ուղղություններն են արևելքից դեպի արևմուտք, իսկ Lankershim Bl և Laurel Canyon Bl՝ հյուսիսից հարավ:

> 2019թ. AA զեկույցն ուսումնասիրելուց հետո Metro-ի Խորհուրդը հրահանգել է անձնակազմին ներառել Roscoe Bl և NextGen Ավտոբուսային ծրագիրն այլընտրանքների հետազոտության մեջ:

> NextGen Ավտոբուսային ծրագրի հետ միասին՝ Metro-ն ուսումնասիրել է վերափոխված BRT Ցանցի բարելավումների տարբերակը գարուն/ամառ 2022թ. համար:

> 2022թ. դեկտեմբերին Metro-ի Խորհուրդը հաստատել է BRT Ցանցի բարելավումների տարբերակը և լիազորել է լրացնել CEQA Բացառման ծանուցագիրը SB 288*-ի միջոցով, ինչը հաստատվել է 2023թ. հունվարին:

Հաջորդ քայլերը

Ակնկալվում է, որ նախագծի իրագործումը կսկսվի 2023թ. աշնանը և կշարունակվի մինչև 2025թ. ընթացքում: Այցելեք մեր ինտերակտիվ Պատմության քարտեզը (StoryMap)՝ նախագծի մասին ավելին իմանալու և Ձեզ հարմար պահին տեղեկատվությունն ուսումնասիրելու համար: Խնդրում ենք այցելել ***bit.ly/northsfv*** կայքը կամ սկանավորել կոդը:

* SB 288-ն արագացնում է կայուն փոխադրամիջոցների նախագծերը՝ Կալիֆորնիայի Բնապահպանական որակի ակտի (California Environmental Quality Act, CEQA) բացառում տրամադրելով կայուն փոխադրման նախագծերի մի թիրածխային խմբի:

Նախագծի ժամանակացույց

ՄԵՆՔ ԱՅՍՏԵՂ ԵՆՔ

2022	2023	2023–2025
Գարուն/ամառ Հանրության տեղեկացում	**Աշուն** Նախընտրելի այլընտրանքի քննարկում Խորհրդի կողմից	**Աշուն** Իրականացման նպատակներ հետևյալի համար՝ > Roscoe Bl-ի ավտոբուսային առաջնահերթության գծեր > 10-րոպեանոց ծառայություն շաբաթվա օրերին Roscoe Bl-ում և Nordoff St-ում > Նոր կանգառների կառուցման սկիզբ	**Ձմեռ** Իրականացման նպատակներ հետևյալի համար՝ > Նոր ավտոբուսային կանգառներ > Ավտոբուսային ելուստներ > Առանց արտանետումների ավտոբուսներ > Փոխադրումների ազդանշանի առաջնահերթություն > Ուղևորների թարմացված հարմարություններ փոխադրման հիմնական հինգ վայրերում > Բոլոր դռներից նստեցում բոլոր SFV ավտոբուսային գծերի վրա

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կապվեք մեզ հետ

Խնդրում ենք օգտվել հետևյալ կապ հաստատելու գործիքից, որպեսզի լրացուցիչ տեղեկություններ ստանաք նախագծի մասին, հարցեր տաք կամ մեկնաբանություններ անեք.

213.418.3082

northsfvbrt@metro.net

metro.net/nsfvbrt

@metrolosangeles

losangelesmetro

23-2735 TRC ©2023 LACMTA